



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա



Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկություններն ու դիտարկումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի վերաբերյալ

25.02.2021 թվականին հրապարակվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից հեղինակած Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:¹

Ստորև ներկայացնում ենք Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկություններն ու դիտարկումները հիշյալ նախագծի խնդրահարույց դրույթների վերաբերյալ:

Գտնում ենք, որ ՀՀ դատական համակարգում առկա խնդիրները պետք է լուծվեն համակարգային և փաստարկված փոփոխությունների արդյունքում, այն դիտարկելով սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, և ոչ թե հատվածական և չհիմնավորված փոփոխություններով: Ավելին, հիշյալ նախագծի անհրաժեշտությունը պատճառաբանված չէ, այն վտանգի տակ է դնում փաստաբանների, դատարանների և ԲԴԽ գործունեության անկախությունն ու արդյունավետությունը հետևյալ հիմնավորմամբ:

1. Նախատեսվում է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում (այսուհետև՝ Օրենսգիրք) ավելացնել դատական սանկցիայի նոր տեսակ՝ իրավունքների իրականացման սահմանափակում, որով առաջարկվում է դատարանի կողմից կիրառելի դարձնել այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը, իր դատավարական իրավունքներից օգտվելիս, պարբերաբար չարաշահում է դրանք՝ վտանգելով

¹ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=61201&fbclid=IwAR1rDa4Xo_hDeMCqPiAz0e-8s4MK8cmbYUnWoigX1ddfvYNNV60UcM9mPgvk#

դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխավորումն ու արդարադատության շահի ապահովումը:

Այս մասով խնդրահարույց է իրավական որոշակիության բացակայությունը: Հարկ է սահմանել այն իրավունքները, որոնց պարբերաբար չարաշահումը կարող է հանգեցնել իրավունքների սահմանափակման, ինչպես նաև քանակական կամ այլ չափանիշներ, որոնք դատավարության մասնակիցներին թույլ կտան կանխատեսել և խուսափել դատական սանկցիայից: Այսինքն, կիրառվող պատասխանատվության տեսակի կիրառումը և դրա համար հիմք հանդիսացող գործողությունների ցանկը կողմի համար կանխատեսելի չէ: Բացի այդ, դատարանին նման լայն հայեցողական լիազորությամբ օժտելը կարող է հանգեցնել տարբերակված մոտեցման, կանխակալ վերաբերմունքի խորացման և գործնական միջոցներով այս կամ այն կողմին առավելություն տալուն:

Այս սանկցիայի նախատեսման գաղափարը ընդհանրապես բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու նախագծից,² որտեղ նույնիսկ նախատեսված է որոշակիություն և սպառիչ կերպով սահմանված են կիրառման ենթակա սահմանափակումները, հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 314.4. Իրավունքի իրականացման սահմանափակումը

1. Որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը անձի կողմից իր դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում դատարանի որոշմամբ դրանց իրականացման պայմանների սահմանումն է:

2. Սույն հոդվածով նախատեսված դատավարական սանկցիան կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում՝

1) միջնորդություն հարուցելը.

2) բացարկ հայտնելը.

3) վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելը.

4) վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը.

5) բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը.

6) պաշտպանից հրաժարվելը,

² <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12260&Reading=0>

7) պաշտպանի լիազորությունները դադարեցնելը:

3. Որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը կարող է կիրառվել նաև նույն անձի մի քանի պաշտպանի, լիազոր ներկայացուցչի կամ փաստաբանի ներկայանալու դեպքում: Այդ դեպքում որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը դրսևորվում է տվյալ գործողությանը մասնակցելու հնարավորություն տալով ոչ բոլոր պաշտպաններին, լիազոր ներկայացուցչներին կամ փաստաբաններին:

4. Սույն հոդվածով նախատեսված դատավարական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը:»:

2. Նախատեսվում է Օրենսգրքում ավելացնել 148.1 հոդված, որի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհուրդը դիմում կկարողանա ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առերևույթ առկա է (...) էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են (...) սահմանված ժամկետները:

Առաջին. Սահմանադրության 173-րդ և Օրենսգրքի 79-րդ հոդվածների համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Այս նորմից բխում է, որ Բարձրագույն դատական խորհրդի գործունեությունը պետք է ուղղված լինի իր սահմանադրական և հիմնադիր նպատակին՝ դատավորների և դատարանների անկախության երաշխավորմանը:

Առաջարկվող փոփոխությամբ որևէ կերպ հիմնավորված չէ, թե ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից դատավորի դեմ կարգապահական վարույթ հարուցելու խնդրով ԲԴԽ-ին դիմելն ինչպես է ազդել դատավորների կամ դատարանների անկախության երաշխավորման վրա: Հակառակ, դրանով ծանրաբեռնվելու է ԲԴԽ-ն, որն ազդելու է այս մարմնի գործունեության արդյունավետության վրա: Առկա է մտավախություն, որ այս փոփոխությունն ուղղակիորեն օգտագործվելու է դատավորների դեմ՝ որպես «պատժիչ միջոց» յուրաքանչյուր այն դեպքում, երբ դատավարության կողմերից որևէ մեկը համաձայն չի լինելու դատավորի կայացրած որոշման հետ և այս իրավունքի իրացմամբ կաշկանդելու է դատավորին՝ գործի

քննության ընթացքում:³ Այս փոփոխությամբ ստվերվում է նաև դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների գործունեությունն ու դրանց արդյունավետությունը:

Երկրորդ. Նախագծի հիմնավորումներում բառացիորեն նշված է. «Ինչ վերաբերում է հնարավոր այն փաստարկին, որ քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից դիմում ներկայացնելը կարող է կրկնօրինակել ԲԴԽ դիմող մյուս սուբյեկտների գործառույթները, ապա նշենք, որ նման կրկնօրինակում արդեն իսկ առկա է ներկայումս ԲԴԽ դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների պարագայում: Մասնավորապես, Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից դիմում չներկայացնելու դեպքում, դիմումը կարող է ներկայացվել Արդարադատության նախարարի կողմից և հակառակը, ինչը նշում է նաև Վենետիկի Հանձնաժողովը ՀՀ Դատական օրենսգրքի վերաբերյալ իր 2019թ. հոկտեմբերի 14-ի Կարծիքի (Opinion No. 963/2019) 17-րդ կետում»:

Նախ հարկ է նկատել, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց դեպքում գործ ունենք իրավունքների, այլ ոչ թե լիազորությունների հետ: Ինչպես նաև, ֆիզիկական և իրավաբանական անձինք գործում են իրենց օրինական շահերի, պետական մարմինները՝ պետության շահերի պաշտպանության շարժառիթով, հետևաբար օբյեկտիվորեն անհնար է պետական մարմնի և ֆիզիկական/իրավաբանական անձի՝ համապատասխանաբար իրավունքների և լիազորությունների կրկնօրինակում: Բացի այդ, շարժվելով նախագծի հեղինակների տրամաբանությամբ՝ եթե վերջիններս փաստում են, որ արդեն իսկ առկա է կրկնօրինակում Արդարադատության նախարարության և Դատավորների ընդհանուր ժողովի լիազորություններում, ինչը նաև արտացոլվել է Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով, ապա ինչո՞ւ է ընտրվում արդեն իսկ կրկնօրինակված լիազորություններին ևս մեկ կրկնօրինակ ավելացնելու ուղին: Այն դեպքում, երբ կարելի է դիտարկել վարույթ հարուցելու մեկ մարմին ունենալու հնարավորությունը: Մասնավորապես, առաջարկում ենք, որ դատավորին պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ԲԴԽ դիմելու բացառիկ իրավունք ունենա միայն Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ էթիկայի և կարգապահական հանձնաժողովը): Ներկայումս վարույթ հարուցելու

³ Համաձայն «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի՝ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այսինքն, շահագրգիռ կողմը կարող է դիմում ներկայացնել դատավորի դեմ՝ նախքան իր գործով դատական վարույթի ավարտը, եթե ենթադրյալ խախտումը խաթարում է արդարադատությունը:

իրավունք ունեցող մյուս երկու մարմինները՝ Արդարադատության նախարարությունը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրենց դիմումները ներկայացնեն Էթիկայի և կարգապահական հանձնաժողովին, որի քննության արդյունքում հանձնաժողովը կորոշի վարույթ հարուցել, և ապա միջնորդությամբ դիմել ԲԴԽ: Այս առաջարկի դիտարկման պարագայում, հարկավոր է վերանայել Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի կազմը, դրանում ապահովելով ՔՀԿ-ների և դատավորների բալանսավորված մասնակցություն (50/50) ինչպես գործում է ԲԴԽ կազմի դեպքում՝ 5 դատավոր, 5՝ իրավաբան-գիտնական:

Երրորդ. Որպես փոփոխության միակ հիմնավորում՝ նշվում է հետևյալը. «վարույթ հարուցելու մերժումները հրապարակային չեն և կատարվում են ոչ պատճառաբանված որոշման տեսքով, խախտումների ենթադրյալ գոհերին անմիջապես ԲԴԽ դիմելու իրավունք վերապահելը կնպաստի նաև գործընթացի թափանցիկության ապահովմանը»: Կրկին շարժվելով նախագծի հեղինակների տրամաբանությամբ՝ եթե վերջիններս փաստում են, որ գործընթացի թափանցիկության նվազ աստիճանը պայմանավորված է վարույթ հարուցելու մերժումների չհրապարակվելու և չպատճառաբանված լինելու հետ, ապա ինչու՞ չի ընտրվում թիրախային մոտեցում, օրինակ՝ վարույթ հարուցելու մերժումները պատճառաբանված լինելու և հրապարակման պահանջի հստակ սահմանմամբ:

Նման նույնական մոտեցումը պատճառաբանված չէ, քանզի այն կհանգեցնի ԲԴԽ-ի՝ սովորական գանգատվելու հարթակ դառնալուն, որով ընդհանրապես խախտվում է ընտրված մոդելը: Մասնավորապես, մոդելը կառուցված է այն մոտեցման վրա, որ ԲԴԽ-ն միշտ հանդես է գալիս «դատարան», իսկ արդարադատության նախարարը, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «մեղադրող»: Մինչդեռ, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք չեն կարող լինել այդպիսին, գտող օղակը չի կարող շրջանցվել, ի դեմս՝ նախարարի և հանձնաժողովների: Բացի այդ, ենթադրվում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք զբաղվելու են ոչ թե դատական համակարգի արժանի ծառայողների կերտմանն օժանդակելով, այլ սեփական շահերի պաշտպանությամբ: Նրանք չեն ուսումնասիրելու դատավորի վարքագիծը, բարեվարքությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի աստիճանը և այլն: Հնարավոր խախտումների գերակշիռ մեծամասնությունը պայմանավորված է լինելու բացառապես իրենց նկատմամբ իրենց գնահատմամբ անբարենպաստ դատական ակտի կայացմամբ:

3. **Նախատեսվում է Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասում, *inter alia*, ավելացնել 18.5 և 18.6 կետերը, համաձայն որոնց ԲԴԽ-ն առանձնակի բարդություն ունեցող քրեական գործերի**

քննության արդյունավետությունը և դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պահպանումն ապահովելու նպատակով և ելնելով արդարադատության շահերից, իրավասու դատարանի համապատասխան մասնագիտացման (ենթամասնագիտացման) դատավորների կազմից ընտրում է այդ գործերի քննության համար վիճակահանության մասնակից դատավորների՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից նախկինում նմանատիպ գործեր քննած լինելու հանգամանքը և այդ ընթացքում դատական նիստի բնականոն ընթացքը ապահովելու դրսևորած հմտությունները (18.5), վերցնում է սույն մասի 18.5-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանող գործը այն դատավորներից, ովքեր դրսևորել են նման գործեր քննելու իրենց մոտ անհրաժեշտ հմտությունների բացակայությունը (18.6):

Առաջին. Դատավորների և դատարանների անկախության երաշխիքների, մասնավորապես՝ դատավորների՝ իրենց կողմից քննվող գործերում անձնական շահագրգռվածության բացառման, շարքում մեծ տեղ ունի դատավորների մեջ գործերի բաշխման օբյեկտիվ մեթոդը: Հայաստանում ներդրված է գործերի բաշխման համակարգչային ծրագիրը: Այս հարցում ցանկացած սուբյեկտի որևէ իրավունքով օժտելը պարզ միջամտություն է դատավորների անկախությանը և առաջացնում է ողջամիտ կասկած այդ գործերի քննության օբյեկտիվության նկատմամբ: Դեռ ավելին, ԲԴԽ-ն պետք է ապահովի համակարգչային ծրագրի մշակումը, կատարելագործումը, դրա գաղտնիությունն ու անվտանգությունը, համակարգչային ծրագրի գործարկումը և սպասարկումը: ԲԴԽ-ին նման լիազորություն վերապահելը ոչ միայն չի համապատասխանում իր՝ դատավորների անկախության երաշխավորման սահմանադրական նպատակին, այլև ուղիղ հակասում է դատավորների մեջ գործերի օբյեկտիվ բաշխման դրույթներին, որոնք սահմանված են «ՀՀ Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով:

Երկրորդ. Առկա է իրավական որոշակիության խնդիր: Դատավորներին գործեր տալու և դրանք նրանցից վերցնելու հիմքերը զուրկ են նյութական հիմքերից: Նախկինում նմանատիպ գործեր քննած լինելու հանգամանքը՝ որպես չափանիշ նախատեսելը նշանակում է նորանշանակ դատավորների դեպքում անորոշակիություն, բազմամյա փորձով դատավորների դեպքում անհարկի ծանրաբեռնվածություն: Այդ ընթացքում դատական նիստի բնականոն ընթացքը ապահովելու դրսևորած հմտությունները չափազանց գնահատողական են: Բացի այդ, կանխավարկածն այն է, որ դատավորն ապահովում է նիստի բնականոն ընթացքը: Անհասկանալի է, թե ինչպես պիտի գնահատվեն այդ գործում ներդրած հմտությունները: Օրինակ, X դատավորի նիստերի ընթացքում կիրառվել են սանկցիաներ, Y-ի նիստերում՝ չեն կիրառվել: Արդյո՞ք սա նշանակում է, որ X դատավորն ավելի հմուտ է օգտվում դատավարական նորմերով ընձեռնված հնարավորություններից, թե՞ ընդհակառակը, Y դատավորն առավել հմուտ

է, քանզի նա կանխել է նիստի բնականոն ընթացքից որևէ շեղում, հետևաբար հարցը չի հասել սանկցիա կիրառելուն:

Երրորդ. Առաջարկվող փոփոխությամբ ԲԴԽ-ի ձեռքում են կենտրոնանում պետական տարբեր մարմիններին բնորոշ գործունեության տեսակներ: Մասնավորապես ԲԴԽ-ի իրավասության ներքո են գտնվելու դիմումն ընդունելու կամ վերադարձնելու, դիմումը քննելու, քննության արդյունքում որոշում կայացնելու, որոշմամբ պատասխանատվություն կիրառելու մասին հարցերը: Փաստացի ստացվում է, որ ԲԴԽ-ն ընդունելու է դիմումը, նախապատրաստելու է գործը, իրականացնելու է քննությունն և կայացնելու է որոշում: Այս տարատեսակ լիազորությունների կենտրոնացումը մեկ մարմնի ձեռքում լի է կամայականությունների, կանխակալ վերաբերմունքի, մեկ կետից ղեկավարելու ռիսկերով:

Չորրորդ. Եվ իհարկե, կանխավարկածն այն է, որ համապատասխան հմտությունների չտիրապետող անձինք չեն նշանակվում դատավորի բարձր պաշտոնում: Նշանակվելու դեպքում էլ, այս կամ այն հմտության բացակայության հարցը պետք է լուծել դատավորին վերապատրաստելով, ոչ թե տվյալ տեսակի գործեր քննելուց նրա մեկուսացմամբ:

4. Նախատեսվում է Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել, որ քննարկվող տիպի դիմումները ԲԴԽ-ն քննելու է եռամսյա ժամկետում:

Այս մասով մտահոգությունը կապված է նախորդ՝ 3-րդ կետի հետ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի խնդրով ԲԴԽ դիմելու օրվանից առկա է հավասար հավանականությունն առ այն, որ կհաստատվի կամ չի հաստատվի վերջինիս կողմից խախտում կատարած լինելու հանգամանքը: Այսպիսի իրավիճակը տևելու է առնվազն երեք ամիս (հոդվածի հաջորդ մասով ԲԴԽ-ին տրվում է քննությունը եռամսյա ժամկետով հետաձգելու լիազորություն):

Նշված երեք ամիսների ընթացքում նույնատիպ գործ մակագրվելիս, արդյո՞ք ենթադրվելու է, որ 89-րդ հոդվածի 18.5 և 18.6 կետերը կիրառելի են դատավորի նկատմամբ, քանզի հնարավոր է եռամսյա ժամկետում հաստատվի, որ դատավորը խախտում է կատարել: Նման պարագայում դատավորի կողմից խախտում կատարելը չհաստատվելու դեպքում արդյո՞ք կարելի է ենթադրել, որ գործը նրանից վերցվել է ապօրինաբար՝ ուղղակիորեն միջամտելով վերջինիս կողմից միայն օրենքի և ներքին համոզմունքի հիման վրա արդարադատության իրականացմանը: Դեռ ավելին, անհարկի ավելացել է մյուս դատավորների ծանրաբեռնվածությունը:

Կամ, երեք ամիսների ընթացքում նույնատիպ գործ մակագրվելիս, արդյո՞ք ենթադրվելու է, որ 89-րդ հոդվածի 18.5 և 18.6 կետերը կիրառելի չեն դատավորի նկատմամբ, քանզի, մինչ ժամկետի ավարտը, գործում է «անմեղության կանխավարկածը»: Նման պարագայում դատավորի կողմից խախտում կատարելը հաստատվելու դեպքում արդյո՞ք կարելի է ենթադրել, որ առաջարկվող փոփոխությունն ընդհանրապես չի բացառում խախտում կատարած դատավորին կրկին նույնատիպ գործեր մակագրելը: